



COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր

ԼԻՈՎԻՆ ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ԵՎ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ

Այս և պատվաստման վերաբերյալ այլ ՀՏՀ-ների փաստաթղթերն առցանց տեսնելու համար այցելեք [COVID-19-ի դեմ պատվաստման կայքէջ](#):

Ի՞նչ է նշանակում COVID-19-ի դեմ պատվաստման <<արդիական>> կարգավիճակ ունենալ

Ձեր COVID-19-ի դեմ պատվաստման կարգավիճակի **արդիական** լինելը նշանակում է, որ՝

- Դուք ստացել եք պատվաստանյութի հիմնական շարքի բոլոր առաջարկվող դեղաչափերը և [մեկ խթանիչ դեղաչափ](#)՝ ըստ ժամանակացույցի, -կամ-
- Դուք ստացել եք պատվաստանյութի հիմնական շարքի բոլոր առաջարկվող դեղաչափերը, և դեռևս խթանիչ դեղաչափ ստանալու ժամանակը չէ:

Երբ մարդկանց COVID-19-ի դեմ պատվաստման կարգավիճակն արդիական է, նրանք ստանում են լավագույն պաշտպանությունը COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալու դեմ:

Ստուգեք [COVID-19-ի դեմ Պատվաստման ժամանակացույցը](#) [VaccinateLACounty.com](https://www.vaccinate.lacounty.gov) կայքէջում՝ առաջարկվող բոլոր հիմնական և խթանիչ դեղաչափերի վերաբերյալ տեղեկությունների համար: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս CDC-ի՝ [Պահեք COVID-19-ի դեմ ձեր պատվաստման կարգավիճակն արդիական](#) կայքէջը:

Ե՞րբ եմ ես համարվում լիովին պատվաստված:

Դուք համարվում եք լիովին պատվաստված պատվաստանյութի հիմնական շարքի բոլոր առաջարկվող դեղաչափերը ստանալուց երկու շաբաթ անց.

- Դուք ստացել եք COVID-19-ի դեմ Johnson & Johnson (J&J)/Janssen պատվաստանյութի միակ դեղաչափը, կամ
- Դուք ստացել եք COVID-19-ի դեմ Pfizer (COMIRNATY) կամ Moderna (SPIKEVAX) պատվաստանյութի երկրորդ դեղաչափը, կամ
- Դուք կլինիկական փորձարկումների շրջանակում ստացել եք COVID-19-ի դեմ [հաստատված արդյունավետությամբ](#) ակտիվ պատվաստանյութի բոլոր առաջարկվող դեղաչափերը (ոչ պլացեբո):

Եթե դուք պատվաստվել եք ԱՄՆ-ից դուրս կամ պատվաստանյութերի <<միախառնում և համակցում>> տաբերակով, տե՛ս ստորև ներկայացված բաժինները:

Որո՞նք են լիովին պատվաստված լինելու և արդիական կարգավիճակ ունենալու տարբերությունները

Որոշ իրավիճակներ պահանջում են, որ անձը լիովին պատվաստված լինի: Օրինակ, լիովին պատվաստված լինելը կարող է պահանջ լինել [այլ երկրներ ճանապարհորդության](#), աշխատանքի, դպրոց հաճախելու կամ որոշ վայրեր մուտք գործելու համար:

Պատվաստման արդիական կարգավիճակ ունենալը ներկայումս կարող է չպահանջվել շատ իրավիճակներում: Սակայն դա ձեզ լավագույն պաշտպանությունն է տալիս COVID-19-ից:

Արդյո՞ք ես համարվում եմ լիովին պատվաստված, եթե պատվաստվել եմ ԱՄՆ-ից դուրս:

- Եթե դուք ստացել եք COVID-19-ի դեմ այն պատվաստանյութի ամբողջական շարքը, որը հաստատված կամ թույլատրված է FDA-ի կողմից կամ [նշված է ԱՀԿ-ի ցանկում](#)





COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր

ԼԻՈՎԻՆ ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ԵՎ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ

- Դուք համարվում եք լիովին պատվաստված ձեր վերջին դեղաչափը ստանալուց երկու շաբաթ անց:
- **Եթե դուք ստացել եք COVID-19-ի դեմ տարբեր պատվաստանյութերի երկու դեղաչափ, որոնք հաստատված կամ թույլատրված են FDA-ի կողմից կամ [Նշված են ԱՅԿ-ի ցանկում](#) որպես 2 դեղաչափից բաղկացած շարք`**
 - Դուք համարվում եք լիովին պատվաստված ձեր վերջնական դեղաչափը ստանալուց երկու շաբաթ անց: Ծանոթություն. CDC-ն խորհուրդ չի տալիս մարդկանց միախառնել և համակցել COVID-19-ի դեմ պատվաստանյութերը` հիմնական շարքի պատվաստումներն ընդունելիս:
- **Եթե դուք մասամբ կամ ամբողջությամբ ստացել եք COVID-19-ի դեմ այն պատվաստանյութի շարքը, որը հաստատված կամ թույլատրված ԶԷ FDA-ի կողմից կամ Նշված ԶԷ ԱՅԿ-ի ցանկում`**
 - ԱՄՆ իշխանությունների կողմից դուք չեք համարվում լիովին պատվաստված:
 - Եթե ցանկանում եք լիովին պատվաստված համարվել ԱՄՆ-ում, դուք պետք է ավարտեք պատվաստանյութերի նոր շարք, որը թույլատրված կամ հաստատված է FDA-ի կողմից կամ Նշված է ԱՅԿ-ի ցանկում: Դուք պետք է սպասեք պատվաստանյութի ձեր վերջին դեղաչափից հետո առնվազն 28 օր` նախքան COVID-19-ի դեմ FDA-ի կողմից թույլատրված/հաստատված պատվաստանյութի հիմնական շարքը սկսելը:
- **Եթե դուք սկսել եք COVID-19-ի դեմ պատվաստանյութի շարք, որը Նշված է ԱՅԿ-ի ցանկում, սակայն հասանելի չէ ԱՄՆ-ում`**
 - ԱՄՆ իշխանությունների կողմից դուք չեք համարվում լիովին պատվաստված:
 - Եթե դուք արդեն ԱՄՆ-ում եք և ցանկանում եք համարվել լիովին պատվաստված, դուք պետք է ստանաք իՌՆԹ (mRNA) պատվաստանյութի մեկ դեղաչափ (COVID-19-ի դեմ Pfizer կամ Moderna պատվաստանյութ)՝ լիովին պատվաստված համարվելու համար: ԱՅԿ-ի ցանկում Նշված COVID-19-ի դեմ պատվաստանյութի առաջին դեղաչափը ստանալուց հետո պետք է սպասեք առնվազն 28 օր` ձեր հիմնական շարքը ավարտելու համար: Ծանոթություն. 5-17 տարեկան երեխաները կարող են ստանալ COVID-19-ի դեմ միայն Pfizer պատվաստանյութ:

Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս [Մարդիկ, որոնք պատվաստվել են COVID-19-ի դեմ ԱՄՆ-ից դուրս](#):

Արդյո՞ք ես համարվում եմ լիովին պատվաստված, եթե ստացել եմ COVID-19-ի դեմ 2 տարբեր պատվաստանյութեր

CDC-ն խորհուրդ չի տալիս մարդկանց միախառնել և համակցել COVID-19-ի դեմ պատվաստանյութերը հիմնական շարքն ընդունելիս: Սակայն, եթե դուք միախառնում և համակցում եք պատվաստանյութերը, դուք համարվում եք լիովին պատվաստված այն պատվաստանյութերի ցանկացած համակցման դեպքում երկրորդ դեղաչափը ստանալուց 2 շաբաթ անց, որոնք հաստատված կամ թույլատրված են FDA-ի կողմից կամ Նշված են ԱՅԿ-ի ցանկում՝ որպես 2 դեղաչափից բաղկացած սերիա: 1-ին և 2-րդ դեղաչափերի միջև պետք է լինի առնվազն 17 օր ընդմիջում, որպեսզի դուք համարվեք լիովին պատվաստված (21 օր` 4-օրյա հավելյալ ժամկետով):





COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր

ԼԻՈՎԻՆ ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ԵՎ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ



Ավելին իմանալու համար տե՛ս CDC-ի՝ [Ոչ ԱՄՆ Քաղաքացի, Ոչ ԱՄՆ Ներգաղթյալներ. Ծամփորդություն դեպի Միացյալ Նահանգներ և Միացյալ Նահանգներից դուրս](#) կայքէջը:

Որտեղի՞ց կարող եմ ձեռք բերել լրացուցիչ տեղեկություններ:



- Այս ՀՏՀ-ն կամ COVID-19-ի դեմ պատվաստման այլ թեմաների վերաբերյալ ՀՏՀ-ները տպելու կամ տեսնելու համար սկանավորեք QR ծածկագիրը կամ այցելեք [COVID-19 -ի դեմ պատվաստման ՀՏՀ-ները](#) կայքէջ:
- [VaccinateLACounty.com](#)՝ ներառյալ [COVID-19-ի դեմ Պատվաստման Ժամանակցույցը](#), որն աղյուսակներով ցուցադրում է պատվաստման յուրաքանչյուր դեղաչափի ընդունման ժամանակը և տեղեկություններ է տրամադրում այն մասին, թե [ինչպես Պատվաստվել](#):
- CDC-ի կայքէջ՝ [COVID-19-ի դեմ Պատվաստանյութի Խթանիչ Դեղաչափեր](#)
- Հարցերի դեպքում խոսեք ձեր բժշկի հետ

